# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ՄԱՐՏԻ 2025թվականի N 140-Ա

### ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԱՐՑԱԽԻ ՓՈՂ.ՏՈՒՆ 16 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԹԵՎԱՆԻ ԲԱԲԱՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին»ՀՀ օչենքի 37-րդ հոդվածով և 27.04.2010թ. ՀՕ-50-Ն «Իրավունքը հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով,ՀՀ 2008 թվականի ապրիլի 27-ի N50-Ն օրենքով,ՀՀ «Հողային օրենսգրքի» 2010 թվականի ապրիլի 7-ի թիվ 719-Ն որոշմամբ,«Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածով,ՀՀ Կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 11-րդ կետի գ-ենթակետով,ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին որոշմամբ և հիմք ընդունելով սույն կարգի 2-րդ դրույթը սեփականության իրավունքով հատկացված 0.334հա հողամասում գտնվող ինքնակամ /2024JMFS6X/ կառույցի օրինականացման 8-րդ կետը,Հարություն Թևանի Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող Ճամբարակ համայնքի Ճամբարակ քաղաքի 05-002-0019-0008 կադաստրային ծածկագրով հողամասում 2019 թվականին ինքնակամ կառուցված շինության պահպանունը չի խախտում այլ անձանց իրավունքները և շահերը,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով,շինությունները կառուցված են իրեն հատկացված հողամասում.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հարություն Բաբայանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքը բավարարում է ՀՀ ՀՕ-117 ընդունված 10.06.2008թ.,26.12.2002թ. թիվ 50-Ն որոշմամբ իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների և ՀՀ ՀՕ-64-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին:
2. Հարություն Թևանի Բաբայանին՝ծնված՝03.09.1951թ. սեփականության իրավունքով հատկացվել է 0.334հա տնամերձ հողամաս,սակայն փաստացի օգտագործվում է 0.23683հա:Հողամասի վրա կառուցված երկհարկանի 1-ին հարկի 82.2քմ ներքին մակերեսով և 2-րդ հարկի 86.5քմ ներքին մակերեսով բնակելի տունը,10.4քմ մակերեսով բաց պատշգամբը,4.56քմ մակերեսով աստիճանը,4.37քմ ներքին մակերեսով անասնաշենքը և 28.8քմ ներքին մակերեսով 2-րդ անասնաշենքը,38.07քմ ներքին մակերեսով ավտոտնակը և 28.8քմ ներքին մակերեսով կաթսայատան շենքը ինչպես նաև 2019թվականին իր կողմից ինքնակամ/2024JMFS6X/ կառուցված տանիքային հարկով 226.31քմ ներքին և 255.03քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, որոնը կառուցված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա,չեն հակասում

քաղաքաշինական նորմերին,չեն առաջացնում սերվիտուտ՝ ճանաչել Հարություն Բաբայանի սեփական գույք: Ինքնակամ կառուցվցած շինությունը ճանաչել օրինական,որի արժեքը կազմում է 189 500/հարյուր ութսունինը հազար հինգհարյուր/ՀՀ դրամ,վճարել 900185061158 հաշվեհամարին՝համարել Հարություն Բաբայանի սեփականություն:

3. Համայնքի կողմից Հարություն Բաբայանին սեփականության իրավունքով հատկացված 0.23683 հա հողամասը չի գտնվում ՀՕ 60-րդ հոդվածի ցանկում:
4. Անվավեր ճանաչել համայնքապետարանի կողմից 31.01.2025թվականին տրված թիվ55-Ա որոշումը:
5. Սույն որոշումամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

20 __ թ. _____

ք.Ճամբարակ